ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 31.01.2022թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ԳԲՔԱ-LO-2021/121

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ ՀՀ պաշտպանության նախարարություն
Մասնակից՝ «Մեգամար» ՍՊԸ

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-3/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, հուշանվերների, նվերների և պարգևների, շախմատի, տեղեկատվական վահանակների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ), քննության առնելով «Մեգամար» ՍՊԸ-ի (այսուհետ նաև՝ Ընկերություն) կողմից 30.12.2021թ.-ին ներկայացրած բողոքը (այսուհետ նաև՝ Բողոք) և կից փաստաթղթերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. **<u>Գործի նախապատմությունը</u>.**

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Ընկերությունը ներկայացրած բողոքով խնդրել է պարտավորեցնել «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-3/1» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին արձանագրված անհամապատասխանությունները շտկելու նպատակով, սահմանված կարգով մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարին նույն օրը դրա մասին համակարգի միջոցով տեղեկացնել «Մեգամար» ՍՊԸ-ին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը, որից հետո, միայն, հրավիրել գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների նիստ:

Բողոքներ քննող անձին բողոքը մակագրվել է 30.12.2021թ.-ին:

Բողոքներ քննող անձի կողմից 30.12.2021թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ բողոքը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2021/121 համարի ծածկագիրը:

12.01.2022թ.-ին և 31.01.2022թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 12.01.2022թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 31.01.2022թ.-ին:

2. «Մեգամար» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Մեգամար» ՍՊԸ-ն 30.12.2021թ.-ին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«Սույն թվականի դեկտեմբերի 08-ին հրապարակվել է ՀՀ ՊՆ կարիքների համար (այսուհետև՝ Պատվիրատու)՝ նվերների, պարգևների, շախմատների և վահանակների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-3/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը:

16.12.2021թ. «Մեգամար» ՍՊ ընկերությունը 16.12.2021թ. «ՀՀՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-3/1» ծածկագրով ընթացակարգին մասնակցության համար հայտ է ներկայացրել «armeps.am» էլ. գնումների համակարգի միջոցով, սակայն հայտը ներբեռնելուց հետո նկատել ենք, որ մեր կողմից ներկայացված հայտի 1.2 հավելվածը թերի ենք լրացրել և այն չի համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին, մասնավորապես. լրացված չեն հայտարարագրի՝ 1.3.3, 4.5, 4.7.2 և 4.7.3 կետերը (կցվում է): Ուստի, հաշվի առնելով Կարգի 41-րդ և Հրավերի 8.9 կետերի պահանջները, սպասել ենք որպեսզի հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնի նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին համակարգի միջոցով տեղեկացնի մասնակցին՝ առաջարկելով մինչև

կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Սակայն, չստանալով, որևէ ծանուցում, բազմիցս փորձել ենք հրավերով նշված հեռախոսահամարով կապ հաստատել հանձնաժողովի քարտուղարի հետ և պարզել թե գործընթացը ինչ փուլում է գտնվում, իսկ 28.12.2021թ-ին պարզել ենք, որ արդեն իսկ տեղի են ունեցել ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին որոշելու նպատակով գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների նիստ, որի մասին ծանուցում մեր կազմակերպությունը չի ստացել: Այսպիսով, պարզ է դառնում, որ «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-3/1» ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովը անտեսելով Օրենքի 34-րդ հոդվածի, Կարգի 41-րդ և Հրավերի 8.9 կետի պահանջները հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրելով անհամապատասխանություններ սահմանված կարգով չի կասեցրել նիստը և չի ծանուցել մեզ, առ այն, որ մեր կողմից ներկայացված հայտում առկա են թերություններ և չի առաջարկել մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել դրանք: Ավելին՝ հանձնաժողովը հրավիրել և անցկացրել է ոչ գնային պայմանները բավարարող գնահատված բոլոր մասնակիցների հետ գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների նիստ, որի մասին ծանուցում մենք չենք ստացել: Արդյունքում մեր կազմակերպությունը զրկվել է ՀՀ ՊՆ կարիքների համար ապրանքների մատակարարման հնարավորությունից, քանի որ ընթացակարգի անցկացման կարգը հստակ հերթականությամբ իրականացնելու դեպքում, մեր կազմակերպությունը ևս կմասնակցեր բանակցություններին և կառաջարկեր ցածր գնային առաջարկներ, ավելին որոշ չափաբաժինների մասով «Մեգամար» ՍՊԸ-ն հանդիսանում է միակ գնային առաջարկ ներկայացնողը:

Օրենքի 34-րդ հոդվածի, Կարգի 40, 41-րդ և Հրավերի 8.9 կետերի համաձայն՝

Օրենքի հոդված 34. Հայտերի գնահատումը

Հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Կարգի 41-րդ կետ՝ Եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով

տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Հրավերի 8.9 կետ՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ներառյալ երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին համակարգի միջոցով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Վերը նշված հոդվածը և կետերը ուսումնասիրելով, պարզ է դառնում, որ հանձնաժողովը անհամապատասխանություններ արձանագրելուց հետո պարտավոր էր, որպես օրենսդրության պարտադիր պահանջ, ամիջապես մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին համակարգի միջոցով տեղեկացնել մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Օրենքի հոդված 3-ի համաձայն՝

Օրենքի նպատակը, սկզբունքները և գործողության ոլորտը

Սույն օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

2. Գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

Հիշյալ հոդվածից հստակ հետևում է, որ հանձնաժողովը պարտավոր է գնման գործընթացը կազմակերպել միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ,

համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով, ապահովել պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում, իսկ վերջնական նպատակն է տնտեսող, արդյունավետ կերպով պետության կարիքների բավարարումը;

Պնդում եմ, որ հանձնաժողովի որոշումը հակասում է նաև օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված նպատակներին և նույն հոդվածի 2-րդ մասով սահմանված համաչափության սկզբունքին, ասել է թե՝ պետական գնումների ընթացակարգը պետք է ուղղված լիներ գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ հետապնդվող նպատակին և դրան հասնելու միջոցները պետք է լինեն պիտանի, անհրաժեշտ և չափավոր:

Այսպիսով, հանձնաժողովը անտեսելով վերը նշված իրավական նորմերի պահանջները փաստացի՝ ա/ խախտել է գնման ընթացակարգի իրականացման կարգը, բ/ ստեղծել է անհավասար և խտրական մրցակցային պայմաններ, որի արդյունքում մեր ընկերությունը անհիմն կերպով զրկվել է ընթացակարգին հետագա մասնակցությունից, ավելորդ չէ նշել նաև այն, որ ընթացակարգում մեզ չվերականգնելս դեպքում պետությանը կպատճառվի մոտավորապես՝ 1 980 000 ՀՀ դրամի չափով վնաս (գների նվազեցման դեպքում պատրաստ ենք այդ չափով նլազեցնել): Ինչպես նաև, եթե նույնիսկ առանց շտկված փաստաթղթերի մեր կազմակերպությունը ընթացակարգի արդյունքում ճանաչվեր հաղթող մասնակից, ապա դա կարող էր ընթացակարգի մյուս մասնակիցների կամ այլ անձանց համար հիմք հանդիսանա բողոքարկելու մեր կազմակերպությանը հաղթող մասնակից ճանաչելու հանգամանքը:

գ/ չի ապահովվել ՀՀ ՊՆ կարիքների անընդհատ ապահովման գործընթացը, քանի որ հանձնաժողովի գործողությունների արդյունքում գնմասն առարկա հանդիսացող թվով 10 չափաբաժիններից 6-ի մասով ընթացակարգը հայտարարվելու է չկայացած:»:

Ելնելով վերոգրյալներից՝ «Մեգամար» ՍՊԸ-ն Բողոքներ քննող անձին խնդրել է պարտավորեցնել «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-3/1» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին արձանագրված անհամապատասխանությունները շտկելու նպատակով, սահմանված կարգով մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարին նույն օրը դրա մասին համակարգի միջոցով տեղեկացնել «Մեգամար» ՍՊԸ-ին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը, որից հետո, միայն, հրավիրել գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների նիստ:

3. <u>ՀՀ պաշտպանության նախարարության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը</u>.

Բողոքներ քննող անձը 30.12.2021թ.-ին թիվ /ԲՔԱ-ԼՕ/2/21767-2021 գրությամբ դիմել է ՀՀ պաշտպանության նախարարությանը (այսուհետ նաև՝ Պատվիրատու), հնարավորություն տալով «Մեգամար» ՍՊԸ-ի կողմից 30.12.2021թ.-ին ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել անհրաժեշտ բոլոր փաստաթղթերի պատճեններն ու Պատվիրատուի գրավոր կարծիքը:

Պատվիրատուն ստանալով գրավոր դիրքորոշում հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել է հրավիրված նիստերին:

Պատվիրատուն 07.01.2022թ.-ի թիվ Պնա/2-27 գրությամբ, ներկայացնելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված փաստաթղթերը, հայտնել է հետևյալը.

«Ի պատասխան Ձեր 30.12.2021թ.-ի № Մ-14974-2021 գրության՝ հայտնում եմ, որ ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-3/1 ծածկագրով ընթացակարգին ի թիվս այլ մասնակիցների հայտ է ներակայացրել նաև «Մեգամար» ՍՊԸ-ն: Վերջինս ներկայացված բողոքում նշում է, որ ընթացակարգի հանձնաժողովը անտեսելով Օրենքի 34-րդ հողվածի, Կարգի 41-րդ և հրավերի 8.9 կետերի պահանաջները հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրելով անհամապատասխանություններ սահմանված կարգով չի կասեցրել նիստը և չի ծանուցել «Մեգամար» ՍՊԸ-ին, առ այն, որ վերջինիս կողմից ներկայացված հայտում առկա են թերություններ և չի առաջարկել մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել դրանք: Բողոքաբերի պնդումը առ այն, որ հանձնաժողովը հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում «Մեգամար» ՍՊԸ-ի հայտում անհամապատասխանություններ է արձանագրել, առնվազն անհասկանալի է ոչ մի բանով չհիմնավորված, ավելին գնահատող հանձնաժողովի կողմից «Մեգամար» ՍՊԸ-ի՝ հայտով ներկայացված փաստաթղթերը գնահատվել են ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-3/1 ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանող: Հաշվի առնելով վերոգրյալը «Մեգամար» ՍՊԸ-ն armeps համակարգի ոչ ավտոմատ ծանուցմամբ ծանուցվել է կայանալիք բանակցությունների վերաբերյալ (armeps համակարգից արտատպված տարբերակը կցվում է): Ավելին ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-3/1 ծածկագրով ընթացակարգին հայտ Ներկայացրած բավարար գնահատված բոլոր մասնակիցները՝ «Մեգամար» ՍՊԸ-ն և

«Գայանե Հակոբյան Գևորգի» ԱՁ-ն ծանուցվել են միաժամանակ՝ միևնույն ծանուցմամբ: Բանակցությունների համար նշանակված օրը և ժամին «Գայանե Հակոբյան Գևորգի» ԱՁ-ն ներկայացել է բանակցություններին «Մեգամար» ՍՊԸ-ն ոչ: Քանի որ բանակցություններին ներկայանալը, նոր գնային առաջարկ ներկայացնելը մասնակիցների իրավունքն է և ոչ թե պարտականությունը, ուստի գնահատող հանձնաժողովը բանակցություններ վարել է բանակցությունների օրը և ժամին ներկա մասնակցի հետ:

Հաշվի առնելով վերոգրյալը գտնում ենք, որ «Մեգամար» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքը անհիմն է և ենթակա է մերժման:»:

4. <u>ԳԲՔԱ-ԼՕ-2021/121 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից հուշանվերների, նվերների և պարգևների, շախմատի, տեղեկատվական վահանակների ձեռքբերման նպատակով 08.12.2021թ.-ին հայտարարվել է «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-3/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

ii. Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Մեգամար» ՍՊԸ-ն:

iii. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 21.12.2021թ.-ի նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ մասնակիցների էլեկտրոնային հայտերը www.armeps.am կայքի կողմից համարվել է հետագա գնահատման համար ընդունելի: Բոլոր մասնակիցների էլեկտրոնային հայտերում հրավերով պահանջվող /նախատեսված/ փաստաթղթերն առկա են: «Գայանե Հակոբյան Գևորգի» Ա/Ձ-ի և «Մեգամար» ՍՊԸ-ի հայտերով ներկայացրած փաստաթղթերը համապատասխանում են «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-3/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին (պահանջներին):

iv. Հանձնաժողովի 23.12.2021թ.-ի նիստի թիվ 4 արձանագրության 3.3-րդ կետի համաձայն՝ քանի որ «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-3/1» ծածկագրով ընթացակարգով գնումն իրականացվում է «Գնումների մասին» ՀՀ Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ հիման վրա, գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետի և ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի թիվ 526-Ն

որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի պահանջները, որոշել է նիստը կասեցնել և գների նվազեցման նպատակով 28.12.2021թ.-ի ժամը 10:00-ին ՀՀ ՊՆ ԳԿ վարչության նիստերի դահլիճում (ք. Երևան, Բագրևանդի 5) կազմակերպել միաժամանակյա բանակցություններ բոլոր մասնակիցների հետ:

v. Հանձնաժողովի քարտուղարի կողմից armeps ոչ ավտոմատ համակարգի միջոցով 24.12.2021թ.-ին գների նվազեցման նպատակով կազմակերպված միաժամանակյա բանակցությունների վերաբերյալ ծանուցում է ուղարկվել Մասնակցի megamar.info@mail.ru էլ. փոստի հասցեին:

vi. Հանձնաժողովի 28.12.2021թ.-ի նիստի թիվ 5 արձանագրության 1.1-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը արձանագրել է, որ նշված օրը և ժամին «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-3/1» ծածկագրով ընթացակարգի մասնակիցներից «Մեգամար» ՍՊԸ-ն չի ներկայացել բանակցություններին, արդյունքում վերջինիս կողմից առաջարկված գները մնացել են անփոփոխ: «Գայանե Հակոբյան Գևորգի» Ա/Ձ-ն ներկայացել է բանակցություններին:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ «Մեգամար» ՍՊԸ-ի կողմից 30.12.2021թ.-ին ներկայացված բողոքը հիմնավոր է և ենթակա բավարարման մասնակիորեն, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

Նույն հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Վերոնշյալ իրավական նորմերի վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը, փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Զարգացնելով վերոգրյալները՝ Բողոքներ քննող անձը փաստում է նաև, որ գնման առարկան համարժեք հատուցմամբ ձեռք բերելու նպատակը կլիներ ձևական, եթե դրան հասնելուն ուղղված ընթացակարգերի կազմակերպումը չլիներ տնտեսող, արդյունավետ և օգտավետ:

Այն է՝ ընթացակարգերի կազմակերպումը պետք է լինի՝

1. տնտեսող, այսինքն՝ նախատեսված արդյունքին կամ նպատակին հասնելու համար նախատեսված ռեսուրսների, ֆինանսական միջոցների մինիմալացմամբ՝ պահպանելով նախապես սահմանված որակը:

2. արդյունավետ, այսինքն՝ արդյունքի կամ նպատակի մասով պլանավորված և փաստացի վիճակների համեմատությունը: Նախատեսված արդյունքին կամ նպատակին հասնելու համար օգտագործված նյութական և ոչ նյութական միջոցների համարժեքությունը

ձեռք բերված արդյունքին, երբ ապահովվում է կատարված ծախսի և Պատվիրատուի համար դրա օգտակարության միջև պատշաճ հարաբերակցությունը:

3. Օգտավետ՝ գնման առարկան համարժեք հատուցմամբ ձեռք բերելու նպատակով դրան հասնելուն ուղղված ընթացակարգերի արդյունքի կամ նպատակի առավելագույն մակարդակի ապահովում:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել նաև, որ իրավունքի սկզբունքները հիմնարար գաղափարներ են, որոնք արտահայտում են հասարակական կյանքի օբյեկտիվ օրինաչափությունները, ուղղակի կամ անուղղակի ամրագրվում են իրավական նորմերում, իրավական համակարգի հենասյունն են, կոչված են կարգավորելու հասարակական հարաբերությունները, ունեն համապարտադիրության հատկանիշ:

Օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած՝

1) հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը.

2) գնային առաջարկը.

3) ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ կամ տեխնիկական բնութագիր), եթե հրավերով նախատեսված է.

4) հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է՝

ա. գնման ընթացակարգին մասնակցելու գրավոր դիմում՝ նշելով էլեկտրոնային փոստի հասցեն, հարկ վճարողի հաշվառման համարը, գործունեության հասցեն և հեռախոսահամարը,

բ. իր կողմից հաստատված հավաստում՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր համապատասխանության մասին,

գ. ապրանքների գնման դեպքում իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքի

ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մակնիշը և արտադրողի անվանումը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր),

թ. «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հիման վրա իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող իրավաբանական անձի դեպքում՝ հղում գնումների գործընթացին մասնակցող իրավաբանական անձի իրական շահառուների վերաբերյալ տեղեկություններ պարունակող կայքէջին, իսկ այլ իրավաբանական անձանց դեպքում՝ գնումների գործընթացին մասնակցող իրավաբանական անձի իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր՝ «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 60.3-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա սահմանված ձևով և կարգով: Ընդ որում, եթե մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից, ապա սույն պարբերությամբ նախատեսված տեղեկությունը պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության հետ միաժամանակ հրապարակվում է տեղեկագրում:

Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը

գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «ե» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

ՀՀ պաշտպանության նախարարության կողմից հուշանվերների, նվերների և պարգևների, շախմատի, տեղեկատվական վահանակների ձեռքբերման նպատակով 08.12.2021թ.-ին հայտարարված «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-3/1» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի (այսուհետ նաև՝ Հրավեր) 4.3-րդ կետի համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է՝

1) իր կողմից հաստատված՝ սույն հրավերի 2-րդ մասի 2.1 կետով նախատեսված դիմում-հայտարարություն՝ նշելով էլեկտրոնային փոստի հասցեն, հարկ վճարողի հաշվառման համարը, գործունեության հասցեն և հեռախոսահամարը և տեղեկատվություն որևէ երկրի ռեզիդենտ հանդիսանալու վերաբերյալ, որը ներառում է՝

ա) հավաստում սույն հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին.

ե) իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր՝ համաձայն հավելված 1-ի: Հայտարարագիր չի ներկայացվում, եթե մասնակիցը անհատ ձեռնարկատեր կամ ֆիզիկական անձ է: Ընդ որում եթե մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից, ապա սույն պարբերությամբ նախատեսված հայտարարագիրը, որը հայտերը բացելուց հետո ավտոմատ եղանակով հրապարակվում է համակարգում, պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության հետ միաժամանակ հրապարակվում է նաև տեղեկագրում:

Հրավերի 8.9-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյուն¬քում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ներառյալ երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին համակարգի միջոցով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Հրավերի 8.10-րդ կետի համաձայն՝ եթե սույն հրավերի 8.9-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա

վերջինիս հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն հրավերով սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Վերոգրյալ իրավակարգավորումների լույսի ներքո՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ մասնակիցը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով հայտ, որը ներառում է մասնակցի կողմից ներկայացված դիմում-հայտարարությունը, առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը, գնային առաջարկը, հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ): Ընդ որում, Կարգի 41-րդ կետը ուղղակիորեն սահմանում է արձանագրված անհամապատասխանությունը շտկելու անթույլատրելիություն հայտում ներառվող միայն գնային առաջարկի համար, այն էլ՝ որոշ բացառություններով: Սույն կետի իմաստից բխում է, որ մնացած բոլոր դեպքերում հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Հայտերի գնահատումն իրականացվում է հրավերով սահմանված կարգով և հրավերով նախատեսված պայմաններին չհամապատասխանող հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են, ներառյալ եթե մասնակիցը մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն գնահատող հանձնաժողովին չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում նշել, որ օրենսդիրն իմպերատիվ կերպով սահմանել է, որ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի երբ բացակայում է գնային առաջարկը կամ եթե վերջինս ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Բողոքներ քննող անձն արձանագրում է նաև, որ Կարգի 41-րդ կետն ուղղակիորեն սահմանում է և այդ կետի իմաստից բխում է, որ հայտում ներառվող փաստաթղթերում արձանագրված՝ շտկման ենթակա անհամապատասխանություններն ենթակա են շտկման՝

հանձնաժողովի քարտուղարի կողմից Մասնակցին էլեկտրոնային եղանակով ուղարկված ծանուցման ստացման պահից հաշված մեկ աշխատանքային օրյա ժամկետում:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելվել նաև, որ ստանձնած պարտավորությունների (այդ թվում՝ ընթացակարգի և պայմանագրի) խախտման հիմքերը պայմանականորեն կարելի է բաժանել երկու խմբի՝ օբյեկտիվ և սուբյեկտիվ: Օբյեկտիվ հիմքերի մեջ կարելի է դասել ֆորսմաժորային դեպքերը՝ տարերային աղետները, ինչպես նաև արտակարգ իրավիճակը և նմանատիպ այլ՝ անձանց կամքից անկախ հիմքերով առաջացող պատճառները: Սուբյեկտիվ գործոնը պայմանավորված է անմիջականորեն տվյալ անձի հետ կապված և գործնականում ավելի երկար ժամանակ պահանջող ողջամիտ խնդիրների լուծմամբ, առանց որի անհնար է ստանձնած պարտավորությունների կատարումը:

Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ բոլոր դեպքերում էլ, բացի ֆորսմաժորային իրավիճակներից, ստանձնած պարտավորությունների խախտման համար մեղքի բացակայության փաստը հաստատված համարելու համար ընդհանուր կանոնն այն է, որ անձը պարտավոր է ապացուցել, որ օրենքով սահմանված պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ ժամկետի ընթացքում ձեռնարկել է իրենից կախված ողջամիտ ու բավարար միջոցներ այդ պարտավորությունների պատշաճ կատարումն իրականացնելու ուղղությամբ, սակայն իր կամքից անկախ պատճառներով խախտել է գնման ընթացակարգով կամ պայմանագրով ստանձնած պարտավորությունը(ները): Օբյեկտիվ և սուբյեկտիվ հիմքերի վերաբերյալ նմանատիպ դիրքորոշում է հայտնել ՀՀ վճռաբեկ դատարանն իր նախկինում կայացրած որոշումներում *(տե՛ս, «Հայբիզնեսբանկ» ՍՊԸ-ն ընդդեմ «Միլլար» ՍՊԸ-ի թիվ ԵԿԴ/2628/02/13 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 03.12.2014 թվականի որոշումը)*:

Օրենսդիրը, արձանագրված անհամապատասխանությունների շտկում ներկայացնելու պարտականության կատարման համար սահմանելով այդպիսի պահանջ ստանալու պահից հաշված 1 աշխատանքային օրյա ժամկետ, գնման գործընթացի մասնակիցներին ընձեռել է այն օբյեկտիվ ժամանակահատվածը, երբ վերջիններս կարող են իրացնել Օրենքով և Կարգով սահմանված՝ արձանագրված անհամապատասխանությունների շտկելու պարտավորությունը: Ուստի սահմանված պատասխանատվության միջոցները կարող են ի հայտ գալ միայն սահմանված ժամկետի ավարտմամբ կամ մասնակցի կողմից այնպիսի գործողություններ կատարելու արդյունքում, որոնք վկայում են վերջինիս կողմից արձանագրված անհամապատասխանությունները շտկելուց հրաժարվելու մասին:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ Կարգի 41-րդ և Հրավերի 8.9-րդ կետերի դրույթները իմպերատիվ (պարտադիր) կերպով սահմանում են հանձնաժողովի քարտուղարի գործողությունները, որոնք պետք է իրականացվեն մասնակցի հայտում արձանագրված անհամապատասխանությունների դեպքում, այն է՝ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը անհամապատասխանությունների մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը, ինչպես նաև մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ Օրենքի 34-րդ հոդվածի և Կարգի 41-րդ կետի դրույթների իմաստից բխում է, որ մասնակցի ներկայացրած հայտը գնահատվում է բավարար այն դեպքում, երբ այն համապատասխանում է հրավերով նախատեսված պայմաններին:

Հարկ է նկատել նաև, որ Կարգի 41-րդ և Հրավերի 8.9-րդ կետերի դրույթների վրա հասնելու (կիրառելու) հանգամանքը գործադիրը պայմանավորել է հրավերի պահանջների նկատմամբ մասնակցի հայտում արձանագրված անհամապատասխանությունների հանգամանքով: Այլ կերպ ասած՝ նախ անհրաժեշտ է արձանագրել անհամապա-տասխանություն, ապա դրանից հետո նոր առաջարկել կատարելու շտկում:

Ինչպես Օրենքի իմաստից է բխում, որ գնման գործընթացի շրջանակներում ներկայացված հայտերի գնահատումը պետք է ուղղված լինի Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքներով հետապնդվող նպատակին, և դրան հասնելու միջոցները պետք է լինեն պիտանի, անհրաժեշտ և չափավոր:

Միաժամանակ Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ ծանուցման էությունը կայանում է և ուղղված է Մասնակցին որոշակի հանգամանքների վերաբերյալ իրազեկելուն, տեղեկատվություն տրամադրելուն և բովանդակության ամբողջությանը հասու դարձնելուն:

Բողոքներ քննող անձը, ամփոփելով վերոգրյալ դիրքորոշումը, եզրահանգում է նաև, որ թեև գործադիրը հստակ չի սահմանում, թե ծանուցումն ինչպիսի՞ բովանդակություն պետք է պարունակի, սակայն միանշանակ է այն, որ ծանուցումը պետք է լինի այնպիսին, որ հնարավորություն կտա իրապես պարզելու դրանում պարունակվող հանգամանքը (ները), և մասնակցի կողմից ծանուցման հետ ծանոթանալու իրական հնարավորություն ստեղծվի: Այսինքն՝ մասնակիցների համար ծանուցումն իրական հնարավորություն պետք է ապահովի տիրապետելու դրա բովանդակությանը: Ընդ որում, հարկ է նկատել, որ շտկման մասին ծանուցումը պետք է պարունակի նաև տվյալներ շտկման ենթակա փաստաթղթերի

ներկայացման ձևի և կարգի վերաբերյալ (կոնտակտային տվյալներ, էլեկտրոնային փոստի հասցե, որին պետք է մասնակիցն ուղարկի շտկված փաստաթղթերը կամ ներկայացման եղանակը և այլն): Ինչպես նաև այլ անհրաժեշտ տեղեկություններ, որոնք հնարավորություն կընձեռեն ծանուցումը (արձանագրությունը) ստացած մասնակցին, ծանուցմամբ նշված բովանդակությանը ծանոթանալուց հետո, շտկել անհամապատասխանությունները և ներկայացնել այն ձևով, ինչպես նշված է ծանուցմամբ կամ ներկայացված արձանագրությամբ:

Վերոնշյալ պարտադիր վավերապայմանների միաժամանակյա առկայության դեպքում է հնարավոր միայն փաստել՝ ծանուցման նպատակի լիարժեք իրականացման հանգամանքի մասին:

Ընթացակարգի Հրավերով սահմանված իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրի լրացման կարգի (այսուհետ նաև՝ Հայտարարագիր) 1-ին կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ «Հայտարարագրի ներկայացումը» ենթաբաժնում լրացվում են հայտարարագրի ստորագրման օրը, ամիսը, տարին, հայտարարագրի էջերի քանակը, ինչպես նաև դրվում է հայտարարագիրը ներկայացնող անձի ստորագրությունը:

Հայտարարագրի 4-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ «Իրական շահառու հանդիսանալու հիմքերը (բացառությամբ ընդերքօգտագործման ոլորտի հաշվետու կազմակերպությունների)» ենթաբաժինը լրացվում է, եթե հայտարարագիրը ներկայացնող իրավաբանական անձը չի հանդիսանում ընդերքօգտագործման ոլորտի հաշվետու կազմակերպություն: Այս ենթաբաժնում նշվում է, թե «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի» մասին օրենքով նախատեսված որ հիմք(եր)ով է անձը հանդիսանում Կազմակերպության իրական շահառու, և ներառվում են այդ հիմքերի առնչությամբ պահանջվող տեղեկությունները: Մեկից ավելի հիմքերով իրական շահառու հանդիսանալու դեպքում նշում է կատարվում բոլոր հիմքերի մասով՝ համապատասխան կետերում: Այս ենթաբաժնում հիմքերի վերաբերյալ տվյալները լրացվում են հետևյալ կանոններով.

ա. այս ենթաբաժնի «ա» կետում կատարվում է նշում, եթե ֆիզիկական անձը ուղղակի կամ անուղղակի տիրապետում է Կազմակերպության՝ ձայնի իրավունք տվող բաժնեմասերի (բաժնետոմսերի, փայերի) 20 և ավելի տոկոսին կամ ուղղակի կամ անուղղակի կերպով ունի 20 և ավելի տոկոս մասնակցություն Կազմակերպության կանոնադրական կապիտալում: Մասնակցությունը կարող է լինել Կազմակերպության բաժնեմասը (բաժնետոմսը, փայը) սեփականության իրավունքով տիրապետելու ուժով (ուղղակի մասնակցություն) կամ Կազմակերպության բաժնեմասին (բաժնետոմսին, փային)

տիրապետող այլ իրավաբանական անձի բաժնեմասը (բաժնետոմսը, փայը) սեփականության իրավունքով տիրապետելու ուժով (անուղղակի մասնակցություն): Անուղղակի մասնակցությունը կարող է իրականացվել անկախ ֆիզիկական անձի և Կազմակերպության բաժնեմասը (բաժնետոմսը, փայը) տիրապետող իրավաբանական անձի շղթայում առկա միջանկյալ իրավաբանական անձանց քանակից: «Մասնակցության չափը» դաշտում նշվում է Կազմակերպության կանոնադրական կապիտալում մասնակցության չափը՝ տոկոսային արտահայտմամբ: Մասնակցության չափը հաշվարկվում է՝ հիմք ընդունելով իրական շահառուի ուղղակի և անուղղակի մասնակցության արդյունքում Կազմակերպության կանոնադրական կապիտալում մասնակցության բոլոր տոկոսների հանրագումարը: Անուղղակի մասնակցության դեպքում, կազմակերպության կանոնադրական կապիտալում իրական շահառուի մասնակցությունը հաշվարկվում է՝ հիմք ընդունելով յուրաքանչյուր նախորդ միջանկյալ կազմակերպության մասնակցության չափը, այն է՝ Կազմակերպության մասնակից իրավաբանական անձի՝ տոկոսային արտահայտմամբ մասնակցության չափը բազմապատկելով Կազմակերպության մասնակից իրավաբանական անձի կանոնադրական կապիտալում համապատասխան մասնակցի՝ տոկոսային արտահայտմամբ մասնակցության չափով, և այդպես շարունակ մինչև իրական շահառուին հասնելը: «Մասնակցության տեսակը» դաշտում կատարվում է նշում կանոնադրական կապիտալում մասնակցության ուղղակի կամ անուղղակի լինելու մասին: Կանոնադրական կապիտալում և՛ ուղղակի, և՛ անուղղակի մասնակցության առկայության դեպքում նշում է կատարվում միաժամանակ և՛ ուղղակի, և՛ անուղղակի մասնակցության առկայության վերաբերյալ.

բ. այս ենթաբաժնի «բ» կետում կատարվում է նշում, եթե անձն «ա» կետի իմաստով չի հանդիսանում կազմակերպության իրական շահառու, սակայն վերահսկում է Կազմակերպությունը՝ իրավական գործիքների (այդ թվում՝ կնքված գործարքների) ուժով, այլ բնույթի անձնական ազդեցության հիման վրա կամ այլ միջոցներով.

գ. այս ենթաբաժնի «գ» կետում կատարվում է նշում, եթե անձը հանդիսանում է Կազմակերպության գործունեության ընդհանուր կամ ընթացիկ ղեկավարումն իրականացնող պաշտոնատար անձ այն դեպքում, երբ առկա չէ այս ենթաբաժնի «ա» և «բ» կետերի պահանջներին համապատասխանող ֆիզիկական անձ:

Նույն կետի 7-րդ ենթակետի համաձայն՝ «Իրական շահառուի կարգավիճակի վերաբերյալ տեղեկությունները» ենթաբաժնում լրացվում են անձի՝ Կազմակերպության իրական շահառու դառնալու օրը, ամիսը, տարին: Այս ենթաբաժնում կատարվում է նշում իրական շահառուի կողմից Կազմակերպության նկատմամբ վերահսկողության

իրականացման ձևի վերաբերյալ: Փոխկապակցված անձանց հետ համատեղ վերահսկողության իրականացման վերաբերյալ կատարվում է նշում, եթե իրական շահառուն Կազմակերպությունը վերահսկում է իր հետ փոխկապակցված անձի հետ համաձայնեցված գործելու ուժով կամ կարող է այն վերահսկել իր հետ փոխկապակցված անձի հետ համաձայնեցված գործելու դեպքում: Եթե հայտարարագիրը ներկայացնող իրավաբանական անձը հանդիսանում է ընդերքօգտագործման ոլորտի հաշվետու կազմակերպություն, այս ենթաբաժնում նաև կատարվում է նշում իրական շահառուի՝ Ընդերքի մասին օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 53-րդ կետի իմաստով պաշտոնատար անձ կամ նրա ընտանիքի անդամ հանդիսանալու վերաբերյալ:

Սույն գործում առկա փաստերի համաձայն՝ ՀՀ պաշտպանության նախարարության կողմից հուշանվերների, նվերների և պարգևների, շախմատի, տեղեկատվական վահանակների ձեռքբերման նպատակով 08.12.2021թ.-ին հայտարարված «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-3/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը կազմակերպվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 5-րդ և 6-րդ մասերի հիման վրա՝ ֆինանսական միջոցներ նախատեսված չլինելու հիմքով:

Հանձնաժողովի 21.12.2021թ.-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ ներկայացրած «Գայանե Հակոբյան Գևորգի» Ա/Ձ-ի և «Մեգամար» ՍՊԸ-ի հայտերով ներկայացրած փաստաթղթերը համապատասխանել են «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-3/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին (պահանջներին):

Հանձնաժողովի 23.12.2021թ.-ի նիստի թիվ 4 արձանագրության 3.3-րդ կետի համաձայն՝ քանի որ «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-3/1» ծածկագրով ընթացակարգով գնումն իրականացվում է «Գնումների մասին» ՀՀ Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ հիման վրա գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետի և ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի պահանջները, որոշել է նիստը կասեցնել և գների նվազեցման նպատակով 28.12.2021թ.-ի ժամը 10:00-ին ՀՀ ՊՆ ԳԿ վարչության նիստերի դահլիճում (ք. Երևան, Բագրևանդի 5) կազմակերպել միաժամանակյա բանակցություններ բոլոր մասնակիցների հետ:

Հանձնաժողովի քարտուղարի կողմից armeps ոչ ավտոմատ համակարգի միջոցով 24.12.2021թ.-ին գների նվազեցման նպատակով կազմակերպված միաժամանակյա

բանակցությունների վերաբերյալ ծանուցում է ուղարկվել Մասնակցի megamar.info@mail.ru էլ. փոստի հասցեին:

Հանձնաժողովի 28.12.2021թ.-ի նիստի թիվ 5 արձանագրության 1.1-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը արձանագրել է, որ նշված օրը և ժամին «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-3/1» ծածկագրով ընթացակարգի մասնակիցներից «Մեգամար» ՍՊԸ-ն չի ներկայացել բանակցություններին, իսկ «Գայանե Հակոբյան Գևորգի» Ա/Ձ-ն ներկայացել է բանակացություններին:

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման վրա, դրանց համակարգված և համադրված վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ, տվյալ դեպքում, «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-3/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը «Մեգամար» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը բավարար գնահատելով գործել է ոչ իրավաչափ՝ խախտելով Օրենքի 34-րդ հոդվածի և Կարգի 41-րդ կետով սահմանված դրույթները:

Բողոքներ քննող անձը, ուսումնասիրելով և գնահատելով Ընկերության կողմից հայտին կից ներկայացված հավելված 1.2-ը՝ իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիրը, այն համադրելով Ընթացակարգի Հրավերով սահմանված իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրի լրացման կարգի պահանջներին, հարկ է համարում փաստել, որ «Մեգամար» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հավելված 1.2-ը չի համապատասխանում Հայտարարագրի լրացման կարգով սահմանված պահանջներին. Մասնավորապես՝ լրացված չեն Հայտարարագրի 1.3.3-րդ և 4.7-րդ կետերը, իսկ 4.5-րդ կետը թերի է լրացված, որպիսի պայմաններում ընթացակարգի գնահատող հանձնաժողովը պետք է մասնակցի հայտում արձանագրեր հրավերի պահանջներին ու պայմաններին անհամապատասխանություններ և ելնելով Օրենքի 34-րդ հոդվածի, Կարգի 41-րդ և Հրավերի 8.9-րդ կետերի իմպերատիվ դրույթներից՝ պարտավոր էր ծանուցել մասնակցին՝ առաջարկելով շտկել արձանագրված անհամապատասխանությունները, որը չի արել:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում, գործով հաստատված փաստերի գնահատմամբ՝ Բողոքներ քննող անձն եզրահանգում է, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից չի պահպանվել Օրենքի 34-րդ հոդվածով, Կարգի 41-րդ և Հրավերի 8.9-րդ կետերով սահմանված դրույթները, որպիսի պայմաններում «Մեգամար» ՍՊԸ-ի ներկայացրած բողոքը հիմնավոր է և ենթակա բավարարման մասնակիորեն:

Անդրադառնալով գների նվազեցման շուրջ միաժամանակյա նոր բանակցություններ հրավիրելու մասին բողոքով ներկայացված պահանջին՝ Բողոքներ քննող անձը գտնում է,

որ այն անհիմն է, քանի որ սույն բողոքի բավարարմամբ և Հանձնաժողովի կողմից մասնակցին՝ իր կողմից ներկայացված հայտում առկա անհամապատասխանությունների վերաբերյալ շտկման մասին ծանուցում ուղարկելը չի կարող հանգեցնել գների նվազեցման շուրջ բանակցությունների կրկին անցկացմանը: Ընկերությունը 24.12.2021թ.-ին Հանձնաժողովի քարտուղարի կողմից armeps ոչ ավտոմատ համակարգի միջոցով ծանուցվել է կազմակերպված միաժամանակյա բանակցությունների վերաբերյալ և օգտվելով իր իրավունքից՝ չի ներկայացել բանակցություններին, արդյունքում վերջինիս կողմից առաջարկված գները մնացել են անփոփոխ:

Ուստի բողոքը այս մասով անհիմն է և ենթակա մերժման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝

Ո Ր Ո Շ Ե Ց

«Մեգամար» ՍՊԸ-ի կողմից 30.12.2021թ.-ին ներկայացված ԳԲՔԱ-ԼՕ-2021/121 ծածկագրով բողոքը բավարարել մասնակիորեն:

1. Պարտավորեցնել «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-3/1» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ընդունել «Մեգամար» ՍՊԸ-ին անհամապատասխանությունների շտկման մասին ծանուցում ուղարկելու վերաբերյալ որոշում:

2. Բողոքը՝ գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների նիստ հրավիրելու պահանջի մասով մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**